



«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ եւ մասնավորապես պատմագիտության զարգացման առաջընթացում ժԹ. դարի երկրորդ կեսից մինչեւ Ի. դարասկզբի առաջին երկու տասնամյակները, կես դար շարունակ, մեծ դեր է կատարել Կովկասում հայագիտության առաջին հանդեսը հանդիսացող «Արարատ» ամսագիրը, որը հիմնադրվել է Վաղարշապատում 1868 թ.: Հիմնադրումից սկսած լինելով էջմիածնի Մայր Աթոռի պաշտոնական հրատարակությունը այն խմբագրել է միաբաններից կազմված կոլեգիան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նշանակած խմբագրի ղեկավարությամբ: Տարբեր ժամանակներում «Արարատ» ամսագիրը խմբագրել են արքեպիսկոպոսներ Ա. Մխիթարյանը, Խ. Ստեփանեն, եպիսկոպոս Ա. Դավթյանը, վարդապետ Կ. Մկրտչյանը, Գ. Տեր-Մկրտչյանը (միաբան), նշանավոր հայագետներ Գ. Հովսեփյանը, Մ. Տեր-Մկրտչյանը, Հ. Տեր-Մովսիսյանը, Ա. Աբրահամյանը (Նազարյան), Ս. Տեր-Ստեփանյանը, Ն. Միքայելյանը, Բ. Աղավեկյանը, Տ. Մելիք-Մուշկամբարյանը (Տեր-Հովհաննիսյան), Գ. Տեր-Ղազարյանը եւ ուրիշներ¹: «Արարատ»-ի խմբագիր գործակցի պաշտոնով աշխատել են Ղ. Աղայանը, Պ. Սիմոնյանցը, Հ. Հովհաննիսյանը եւ Հ. Մանանդյանը²: Հենց սկզբում էլ «Արարատ»-ը հրատարակվել է իբրեւ «Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական, բարոյական եւ ազգային բնույթի»³: Հանդեսում կաթողիկոսական կոնդակների, սինոդի գրագրությունների քաղվածքների, կրոնա-դավանաբանական ուսումնասիրությունների կողքին մեծ տեղ է տրվել հայագիտական,

¹ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 1, Երեւան, 1974, էջ 695:

² Հայկական համառոտ հանրագիտարան, հտ. 1, Երեւան, 1990, էջ 337:

³ Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 1, էջ 695:

մասնավորապես՝ պատմական բնույթի ուսումնասիրություններին, մեծապես նպաստելով գիտության այդ ճյուղի զարգացմանը: Ամսագրում կեսդարյա ընթացքում հրատարակվել են մատենագիտական բնագրերից, վավերագրերից, հիշատակարաններից, ուղեգրություններից, սկսած մինչև սեպագիր արձանագրությունները, դրանց վերծանումները եւ պատմաքննական, գիտական խորը ուսումնասիրություններ: Հանդեսն անմիջապես իր շուրջը համախմբեց հայ եւ օտարազգի պատմաբան շատ կարող ուժերի: «Արարատ»-ի խմբագրատունը դարձավ մի հաճելի ժամագրավայր, ուր տարիների իրենց ստեղծագործական պրպտումների արդյունքները հրատարակեցին տարբեր սերունդների հայ եւ օտար պատմաբաններ: Հանդեսի՝ իբրեւ Կովկասի հայագիտության առաջնեկի՝ պատմագիտության զարգացման հաջողությունները մեծապես պայմանավորված էին նրա շուրջը համախմբված այն տաղանդավոր հայ եւ օտարազգի հոգվածագիրների փաղանգով, որով կարող էր հպարտանալ միջազգային հեղինակավոր ցանկացած ամսագիր: Այդ շնորհաշատ հայագետներից, պատմաբաններից կարելի է առանձնացնել Երոպայում եւ Ռուսաստանում բարձրագույն կրթություն ստացած Հակոբ Մանանդյանին, Նիկողայոս Ադոնցին, Աշոտ Հովհաննիսյանին, Հրաչյա Աճառյանին, Մանուկ Աբեղյանին, Լեոյին, Գալուստ Տեր-Մկրտչյանին, Լեոն Մելիքսեթբեկին, Արշակ Տեր-Միքելյանին, Քերովբե Պատկանյանին, Հովսեփ Օրբելուն, Թադեոս Ավդալբեկյանին, Ալեքսեյ Զիվելեգովին եւ այլոց: Ահա այս թվարկումն այսպես կարելի է շարունակել, որը եւ գալիս է հավաստելու այն կարեւոր փաստը, որ «Արարատ» ամսագրի թիկունքին, սկսած նրա առաջին իսկ համարի ժամանակներից, կանգնած էր հայ մտավորականների այնպիսի մի պատկառելի ջոկատ, որից ավելի լավը դժվար է երեւակայել անգամ, եւ որպիսին բաղձանք ու երազանք մնաց հայկական հին ու նոր ժամանակների՝ առանց բացառության բոլոր հանդեսների ու նրանց խմբագիրների համար: Այս էր ահա այն հիմնական եւ առաջին պատճառը, որ «Արարատը» սկզբից եւեթ կարողացավ հայագիտական, պատմաբանասիրական-թարգմանական, պատմահասարակական բարձրագույն մակարդակ ապահովել եւ, հենարան ունենալով գերազանցապես իր երիտասարդ ու վաստակաշատ թղթակիցներին, կարողացավ մեր պատմության ու մշակույթի բնագավառներում այնպիսի անվիճելի աստիճանի հասնել, որն աննախադեպ անուն ու հեղինակություն ապահովեց նրա համար: Եթե արձանագրենք միայն, որ տարիների

ընթացքում «Արարատ»-ում տպագրված պատմագիտական նյութերի անվիճելիորեն գերակշիռ մասը հաջողություններ դիմացավ ժամանակի քննությունը եւ իր գիտական ու մասնագիտական արժեքը պահպանեց նույնիսկ մեր օրերում, ապա մեր ասելիքը կամբողջանաւ: Այս ընթացքում կեսդարյա հանդեսը կարողացավ պահպանել իր սեփական «եսը», ունենալով իր ուրույն գիծը, առանձնահատուկ մոտեցումները, որոնց բոլորի հիմքում ընկած են գիտականությունն ու պատմականությունը, անաչառությունն ու ճշմարտությունը: Հանդեսը կարողացավ զարգացնել հայ պատմագիտության լավագույն ավանդույթները: Նրա էջերում առաջինն են բարձրացվել պատմագիտական վիճահարույց բազում հարցեր, իրենց լուծումն են ստացել շատ հիմնախնդիրներ:

Հանդեսը ինչ-որ չափով ուղեցույց է դարձել նաեւ պատմագիտական առանձին թեմաների մշակման համար: «Արարատ»-ի էջերում տեղ են գտել պատմագիտական բնույթի հոդվածներ, այդ թվում՝ ժամանակի առաջավոր ազգային ու սոցիալական շարժումներն արտացոլող կամ դրանց առնչվող գաղափարներ, պատմական ու հասարակագիտական մտքի արդիական դրսեւորումներ: «Արարատ»-ը նպաստել է հայ հանրության մեջ ուսման եւ հատկապես՝ հասարակական գիտությունների տարածմանը, մերձեցրել նրան քաղաքակրթության արժեքներին եւ պատմամշակութային կապեր ստեղծել քաղաքականապես տարբաժան ազգի հարատեւման համար: Հիմնադիրների եւ առաջին խմբագիրների նպատակն էր հասկանալի եւ ըմբռնելի ձևով հայության ամենատարբեր խավերին ու մասերին հասցնել լուսավորական գաղափարներ, անհատի բարոյական ազնվացման համար տալ օգտակար խորհուրդներ, ազգի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական եւ հոգեւոր կյանքի վերածնման համար նշել վստահելի ուղիներ՝ օրինակ ունենալով հայոց պատմության անցյալն ու ներկան, եւրոպական ժողովուրդների առաջընթացը: Զափազանց դժվար է մի ակնարկում գնահատել այն հսկայական, ծավալուն աշխատանքը, որ կատարել է հանդեսը շուրջ 50 տարիների ընթացքում հայ պատմագիտության զարգացման բնագավառում: Ուստի որոշեցինք կատարվածը ներկայացնել թուղթիկ ակնարկի ձևով, որն, անշուշտ, միայն մոտավոր գաղափար կարող է տալ մեծածավալ աշխատանքների մասին: Անհրաժեշտ համարեցինք հանդեսում տպագրված պատմագիտական նյութերը ներկայացնել ըստ պատմաշրջանների՝ հին եւ միջին դարեր, նոր եւ նորագույն ժամանակներ: Բնականաբար, յուրաքանչյուր

պատմաշրջանի ներսում եւս կատարվել է յուրօրինակ ստորաբաժանում՝ հիմք ընդունելով ժամանակագրական սկզբունքն ու թեմատիկան:

Հայոց քաղաքական պատմությանը նվիրված ուսումնասիրությունների կողքին, հանդեսը, բնականաբար, լայնորեն անդրադարձել է նաեւ պատմագիտության օժանդակ առարկաներին, ինչպես օրինակ՝ հայոց պատմության աղբյուրագիտությանն ու պատմագիտությանը, պատմական աշխարհագրությանն ու տեղագրությանը, հայկական դրամագիտությանը, մամուլի պատմությանն ու Հայկական սփյուռքի եւ գաղթավայրերի հիմնախնդիրներին: Թվում է, թե հաջողվել է առաջարկվող սույն ուրվագծով ընթերցողներին ներկայացնել այն հսկայական տքնաշան ու շնորհակալ աշխատանքը, որը կատարել է «Արարատ» հանդեսը հայ պատմագիտական մտքի անդամատանում: Անշուշտ, հարցը միայն քանակին չի վերաբերում: Որպես կանոն, վերոնշյալ բնագավառներին նվիրված հոդվածները գիտական նորույթ են: Շատ նյութեր հանդեսի միջոցով են դրվել շրջանառության մեջ, շատերն էլ առաջին անգամ են ենթարկվել գիտական մշակման: Հանդեսում մեծ թիվ են կազմում աղբյուրագիտությանն ու պատմագրությանը նվիրված հոդվածները: Լայն ու ընդգրկուն են հարցերի այն շրջանակները, որոնք լույս են տեսել հանդեսի էջերում՝ հայ ժողովրդի պատմության վաղնջական ժամանակներից մինչեւ 1919 թ. Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնահարցերը, շուրջ 4400 տարվա ժամանակաշրջանի ընդգրկմամբ:

Հայ ժողովրդի հնագույն ու հին շրջանի եւ միջնադարյան պատմության վերաբերյալ գիտական հոդվածներից կարելի է առանձնացնել Հայոց պատմագիտության հանգուցային խնդիրները Հակոբ Մանանդյանի եւ Նիկողայոս Ադոնցի «Արարատ»-ի էջերում տպագրված հոդվածներում: Հ. Մանանդյանը էջմիածին է գալիս 1899 թ. վերջերին: Այդ մասին «Արարատ» ամսագրում տպագրված է հակիրճ հաղորդագրություն. «1899 թ. դեկտեմբերի վերջերին Մայր Աթոռ ժամանեց ճեմարանի լսարանական բաժնի հունարենի ուսուցիչ պրն. Հ. Մանանդյանը, որն իր ուսումն ավարտել է արտասահմանում (Ենայի, Լայպցիգի, Ստրասբուրգի եւ Ս. Պետերբուրգի համալսարաններում): Նա ընդունում է Գեւորգյան ճեմարանի տեսչության հրավերը եւ տեղափոխվում էջմիածին: Պարոնը ծննդյան տոներից հետո սկսել է արդեն իր դասերը»⁴: Բացի լսարանական ժամի երեք դասարաններից, Մանանդյանը հին հունարեն է դասավանդում

⁴ «Արարատ», 1900, Ա., էջ 22:

նաեւ դասարանական եւ հին փիլիսոփայության պատմություն՝ լսարանական բաժիններում: Հետագայում լսարանական բաժնում դասավանդել է նաեւ հին հունական գրականության պատմություն, արեւմտաեւրոպական գրականության պատմություն, արեւմտաեւրոպական գրականության պատմություն եւ գերմաներեն: Հ. Մանանդյանը Գեորգյան ճեմարանում դասավանդել է ուղիղ հինգուկես տարի՝ 1900 թ. հունվարից մինչեւ 1905 թ. հունիս: Ս. Վրացյանը նրան համարում հիանալի ուսուցիչ, որն առիթը բաց չէր թողնում սաների մեջ սեր ներարկելու հայրենի երկրի անցյալի պատմության նկատմամբ, դաստիարակել նրանց որպես ճշմարիտ հայրենասեր քաղաքացիներ, միշտ շեշտելով ճեմարանի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ներկա իմացական կյանքում՝ ճեմարանականներին համարելով հայ ազգի հույսը: Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանի 1902 թ. հունվարի 23-ի կոնդակով՝ Հ. Մանանդյանը նշանակվում է «Արարատ» ամսագրի խմբագրապետ, բազմահմուտ հայագետ Գ. Տեր-Մկրտչյանի հետ միասին, օգնական՝ լծակից ունենալով ճեմարանի իր գործընկեր Ս. Տիգրանյանին⁵: Հ. Մանանդյանը ստանձնելով ամսագրի հայագիտական բաժնի պատասխանատվությունը՝ մեծ սիրով ու պարտքի գիտակցումով ձեռնամուխ է լինում «Արարատ»-ի բարի համբավը շարունակելու եւ նրա գիտական բովանդակությունն էլ ավելի հարստացնելու գործին: Այդ շրջանում է, որ «Արարատ»-ի էջերում տպագրվում են Ն. Ադոնցի, Մ. Աբեղյանի, Հր. Աճառյանի, Գր. Խալաթյանցի, Կ. Տեր-Մկրտչյանի, Հ. Թիրաքյանի, Ն. Աղբալյանի եւ այլոց պատմաբանասիրական բարձրարժեք ուսումնասիրությունները: Ամսագրի խմբագրական կազմի ջանքերով այն հավակնում էր դառնալ լավագույն գիտական հանդեսը հայ իրականության մեջ: Բնականաբար, Հ. Մանանդյանն իր հերթին աշխատում էր ամսագրի էջերում հանդես գալ նաեւ սեփական գիտական պատշաճ հրապարակումներով: Այստեղ տպագրվել են նրա՝ էջմիածնի ձեռագրապահոցում կատարած առաջին գիտական պրպտումների արդյունքը հանգիսացող ուսումնասիրություններն ու մի շարք գրախոսականներ: Միայն «Արարատ»-ի 1902 թ. հունվար-մարտյան համարներում տպագրվում են նրա ութ գրախոսականները, որոնք վերաբերում են պատմագիտության եւ գրականության տարբեր խնդիրներին:

Հ. Մանանդյանը «Արարատ»-ի էջերում բարձրացնում է էլ ավելի մտահոգիչ մի այլ հարց: Լույս էր տեսել ռուս պատմաբան Ա. Անինսկու

⁵ Տէս Պ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Պատմագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 2017, էջ 334:

«Հայոց Եկեղեցու պատմությունը» (մինչև ԺԹ. դար) մենագրությունը, որը թե՛ ուսումնասիրության եղանակի եւ թե՛ պատմական նյութի եւ փաստերի ճշտության տեսակետից որեւէ աղերս չունեն գիտականության հետ. «Այս աշխատության մեջ»- պարզաբանում է Հ. Մանանդյանը,- բացակայում է բանասիրական եւ պատմագիտական ոգին եւ ուղղությունը»⁶: Հ. Մանանդյանը այլ առիթ ունեցել էր «Արարատ»-ի էջերում անդրադառնալու սույն պատմաբանի մեկ ուրիշ աշխատության⁷ հակահայկական միտումներին եւ վերհանել դրանք⁸: Այժմ՝ այս նոր գրքում Անինսկին էլ ավելի անզուսպ եւ անարդար հարձակումներ էր կատարում Հայոց եկեղեցու եւ նրա հայրերի նկատմամբ: Հեղինակի համար Հայոց եկեղեցին եւ հայ ժողովուրդը Քաղկեդոնի ժողովից հետո դարձել են «հերետիկոսներ եւ աղանդավորներ, կույր, ֆանատիկոս, տգետ, ամբարտապան, խավարամիտ եւ այլն: Հովհան Օձնեցին ֆանատիկոս է, որովհետեւ մտածում է հերետիկոսի նման»: Անինսկին հետեւողականորեն ու ծրագրավորված հայ հոգեւորականությանն ու ընդհանրապես ամբողջ Հայաստանյայց Եկեղեցին վատաբանում եւ սեւ գույներով է ներկայացնում: «Հայ ժողովրդի մեծամասնությունն այսօր,- զայրացած պարզաբանում է հեղինակը,- աստվածաբանության նրբությունները չհասկանալով՝ կուրորեն պաշտում է իր պապերի հավատը»⁹: Պատմական երեւույթների նման կանխակալ եւ միտումնավոր մեկնաբանությունը յուրաքանչյուր լրջմիտ ուսումնասիրողի համար անընդունելի է: Ահա թե ինչու Մանանդյանը քայլ առ քայլ մատնանշում է, որ հեղինակի ուսումնասիրության եղանակը ո՛չ գիտական է եւ ո՛չ էլ անաչառ, որ այն «միտումնավոր ուղղությամբ կազմված եւ մեծ մասամբ՝ սխալ ու թերի պատմագրական փաստերի վրա հիմնված մի երկ է, եւ մի ապացույց է, որ ատավիզմը (հետասերում, հեռավոր նախնիներին բնորոշ հատկանիշների դրսեւորում) գոյություն ունի նաեւ գիտական գրականության մեջ»¹⁰: Մանանդյանը համոզված է, որ ապագա անաչառ ուսումնասիրությունները, «գիտական արդարամտությունը եւ ճշմարտասիրությունը, խղճի ազատության եւ կրոնական հանդուրժողականության լուսավոր լայն սկզբունքները հաղթելու են եւ կհաղթեն Անինսկիների այն խավար սկզբունքները եւ հասկացողություն-

⁶ «Արարատ», 1902, Գ.-Դ., էջ 336:

⁷ А. Аннинский, Древние армянские историки, как исторические источники, Одесса, 1899, с. 133.

⁸ «Արարատ», 1902, Բ., էջ 85-86:

⁹ А. Аннинский, История Армянской церкви (до XIX века), Кишинев, 1900, с. 137.

¹⁰ Պ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 337:

ները, որոնք խոչընդոտ են անաշառության եւ գիտական արդարամտության: Մեծ անմտություն է, երբ մարդ կարծում է, թե միայն ինքն է իմաստուն»,¹¹ եզրափակում է իր խոսքը Հ. Մանանդյանը¹²: Նույն մտահոգություն մը է առկայում Հ. Մանանդյանի մեկ այլ գրախոսությունը, որ վերաբերում էր հայտնի հասարակական գործիչ Գ. Մելիք-Կարապետյանի աշխատությանը¹³: Գիրքը նվիրված էր Արեւմտյան Հայաստանում գործող գերմանական տարբեր մարդասիրական ընկերությունների գործունեությանը: Գրախոսի կարծիքով՝ խոսքն Արեւմտյան Հայաստանում զգուշությամբ եւ նրբորեն տարվող ավետարանչական քարոզչության մասին է: Իրենք՝ գերմանական քարոզիչները, չէին թաքցնում, որ հայերի շրջանում ավետարանչական քարոզչության շնորհիվ ցանկանում են «զարթեցնել հայ լուսավորչական Եկեղեցին, որ խեղդվել է արտաքին ծեսերի մեջ»: Գրախոսության միջոցով Մանանդյանը ահազանգում էր հայ հասարակությանը, որ գերմանական ընկերությունները հայ որբերին կրթում են բողոքական Եկեղեցու ոգով եւ նպատակ ունեն մեր ազգային եկեղեցին «վերանորոգել» ավետարանականության սկզբունքների հիման վրա: Նրա եզրակացությունը միանշանակ է, անշուշտ, Գերմանիայում կան շատ բարեսիրտ անհատներ եւ իսկական մարդասիրական ընկերություններ, որ անշահախնդրորեն օգնում են հայ որբերին, մեր ժողովուրդը երախտապարտ է գերմանացիներին այն բանի համար, որ նրանք հազարավոր որբեր եւ տառապալներ ազատեցին մահվան վտանգից: Իսկ ինչ վերաբերում է «Գերմանական օգնության ընկերությանը», ապա նրանից պետք է անմիջապես վերցնել որբերի հոգևոր կրթության գործը եւ հանձնել Հայ Եկեղեցու հոգևորականներին: Հ. Մանանդյանի եզրակացությունը միանշանակ է. «Տաճկահպատակ հայերի ողբալի դրությունը թեթեւացնելու համար ամենամեծ արժեքը կունենա Ռուսաստանի բարեկամությունը եւ պաշտպանությունը»¹⁴: Հ. Մանանդյանի կողմից այս շրջանում «Արարատ»-ում տպագրված գիտական ուսումնասիրություններից առանձնանում է՝ «Մի դիտողություն հայոց ներքին կյանքի ուսումնասիրության վրա» չափազանց ուշագրավ հոդվածը¹⁵: Այստեղ հայագետը հանգում է այն ճիշտ հետեւության, որ հասարակության պատմական զարգացման

¹¹ Նույն տեղում:

¹² Գ. Մելիք-Կարապետյան, Գերմանական օգնության ընկերությունները Տաճկա-Հայաստանի համար, Թիֆլիս, 1901, էջ 77:

¹³ «Արարատ», 1902, Ա., էջ 74-75:

¹⁴ «Արարատ», 1902, Բ., էջ 167-171:

վրա մեծ ներգործություն ունի տվյալ ժամանակաշրջանի «արհեստագործության եւ արդյունագործության աստիճանը»։ Ելնելով դրանից՝ նա առաջարկում է «լուրջ քննական վերաբերմունք դեպի հայ ժողովրդի ներքին կյանքը...։ Այլուստ հայոց պատմությունը կմնա միշտ արտաքին անցքերի պատմագրական ժողովածու, քանի որ այդ բնագավառի վերաբերյալ մինչեւ այժմ պակասում են գիտական լուրջ ուսումնասիրություններ»¹⁵։ Այստեղ Հ. Մանանդյանը ժխտում է որոշ պատմաբանների այն տեսակետը, թե իբեւ հայկական պետականությունը կործանվեց նախարարների անմիաբանությունից։ Նշելով, որ այդ անմիաբանությունը մոգական գավազանի գործությամբ հանկարծակի չստեղծվեց, Մանանդյանը գրում է, որ դա բարոյական, իրավական եւ տնտեսական որոշ զարգացման շրջանում եւ աշխարհագրական ու քաղաքական որոշ պայմաններում անխուսափելի էր. «Հունաստանը՝ մեզնից ավելի քաղաքակրթված երկիր, կործանվեց մասամբ էլ այն պատճառով, որ չկարողացավ լուծել ազգային քաղաքական միություն մեծ խնդիրը»¹⁶։ Պատմագիտական այս ճիշտ մոտեցումը նկատի ունենալով է, որ «Մուրճ» ամսագրում տպագրված գրախոսության անանուն հեղինակը պատմաբաններին կոչ էր անում Հայոց պատմությունը շարադրել՝ հաշվի առնելով Հ. Մանանդյանի տեսակետները¹⁷, հանգամանք, որ ինքը՝ Հ. Մանանդյանը, կարողացավ իրագործել միայն տարիներ անց՝ 1920–30-ական թթ., երբ արդեն դասախոսում էր Երեւանի պետական համալսարանում եւ իրեն նվիրել էր Հայաստանի ներքին կյանքի պատմության հարցերի կապիտալ ուսումնասիրության խնդիրներին։ Հ. Մանանդյանի գործունեությունը Գեւորգյան ճեմարանում պսակվեց նաեւ հայագիտական մի այլ մնայուն ձեռքբերումով։ Նշանավոր հայագետ Գ. Տեր-Մկրտչյանի հանձնարարությամբ Հ. Մանանդյանը եւ Հր. Աճառյանն սկսում են զբաղվել ԺԲ.-ԺԹ. դարերի հայկական վկայաբանությունների ուսումնասիրությամբ եւ շուտով ընթերցողի սեղանին են դնում «Հայոց նոր վկաները» երկհատոր ժողովրդական¹⁸, իսկ մեկ տարի անց՝ քննահամեմատական գիտական հրատարակությունը¹⁹։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ «Արարատ», 1902, Բ., էջ 171։

¹⁷ «Մուրճ», 1902, թիւ 4, էջ 231–235։

¹⁸ Հայոց նոր վկաները (Ժողովրդական հրատարակություն), Վաղարշապատ, 1902, հտ. Ա. (1155–1485), 211 էջ, հտ. Բ. (1486–1843), 328 էջ։

¹⁹ Հայոց նոր վկաները (1155–1843)։ Գիտական հրատարակություն՝ բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ ընդարձակ տեղեկություններով ու ծանոթագրություններով, Վաղարշապատ, 1903, 800 էջ։

Ինչպես Աճառյանն է վկայում, գործը տեւեց երկու տարի, որի ընթացքում գործընկերները թերթեցին էջմիածնի գրապահոցի բոլոր 4000 ձեռագրերը²⁰ եւ ստեղծեցին 1155 թ. մինչեւ 1843 թ. հանուն հավատի նահատակվածների պատմությունը: Այս նահատակվածները տոների սրբեր չէին, ուստի նրանց կենսագրությունը պաշտոնապես «Հայամավուրք»-ի մեջ չէր անցել, եկեղեցական օրացույցում էլ չէր հիշատակվում: Այդ բացը լրացնելու մտահոգությամբ է, որ Հ. Մանանդյանն ու Հր. Աճառյանն ստեղծեցին հայոց նոր վկաներին նվիրված աշխատություն՝ ձեռագրերի բաղդատությունամբ, անհրաժեշտ ծանոթագրություններով ու ցանկերով: Գրական քննադատությունը չափազանց բարձր է գնահատել այս ժողովածուի հրապարակ գալը եւ մատնանշել նրա կազմողների բարեխիղճ եւ շնորհակալ աշխատանքը²¹: էջմիածնում եղած գրեթե բոլոր տարիներին Հ. Մանանդյանը հետեւողականորեն զբաղվում էր նաեւ հունաբան դպրոցի թարգմանությունների ուսումնասիրությամբ: Ինչպես հայտնի է, գրերի գլուխից քիչ անց, Սահակ-Մեսրոպյան դպրոցի հեղինակները ձեռնամուխ եղան հունարենից աստվածաբանական եւ փիլիսոփայական երկերի թարգմանությանը: Հայ մատենագրության պատմության մեջ այս ոլորտում կատարված աշխատանքները բնորոշվում են հունաբան դպրոցի թարգմանություններ անունով: Առաջին հայ թարգմանիչների ջանքերով է, որ հին հայերենով թարգմանվեցին Պլատոնի, Արիստոտելի, Պորփյուրի եւ այլոց երկերն ու դրանց մեկնությունները: Զափազանց կարեւորելով հունաբան դպրոցի դերը հայ հին մատենագրության ու ընդհանրապես հայկական մշակույթի զարգացման գործում՝ Հ. Մանանդյանը որոշում է զբաղվել նշված խնդրով: Ընդհանրացնող բնույթի աշխատանքներ կատարելուց առաջ նա մանրամասն ծանոթագրում ու քարտեզագրում է էջմիածնի մատենադարանում պահվող հունաբան դպրոցի բոլոր երկերը: Այնուհետեւ դրանցից առանձնացնում է Դ. դարի եկեղեցական նշանավոր հայրերից հայտնի աստվածաբան Գրիգոր Նազիանզացու Ճառերի Նոննոսի (Ե. դ.) մեկնությունները եւ Դավիթ Անհաղթին վերագրվող իմաստասիրական երկերը պարունակող գրչագրերը: Շուրջ երկամյա աշ-

²⁰ Ի դեպ, ձեռագրերին ծանոթանալու սույն հիանալի առիթը Մանանդյանին հուշեց միմյանց բաղդատել Հակոբ Կարենյանցի հրատարակած ձեռագրացուցակի (1863) համարները ձեռագրերի նոր համարների հետ եւ կազմել ձեռագրերի հին եւ նոր համարների համեմատական տախտակներ. (տե՛ս Ա. MANANDIAN, Die neue Numerierung der in Kareneans Katalogverzeichneten Handschriften, ZAPh, 1903, Band 2, Heft I, էջ 29-40):

²¹ Տե՛ս Գ. ՆՅՈՒԲԱՐՅԱՆ, «Լուծա», 1904, թիւ 3, մայիս-հունիս, էջ 222-223: «Մուրճ», 1904, թիւ 5, էջ 147: Ա. MEILET, Revue critique d'histoire et de litterature, Paris, 1904, t. 58, p. 459-460 եւ այլն:

խատանքների հանրագումարն է Նոննոսին նվիրված գերմաներեն ուսումնասիրությունը²²: Այստեղ Հ. Մանանդյանը մանրամասն վերլուծել է Նազիանզացու հինգ ճառերի Նոննոսի մեկնությունների հին հայերեն թարգմանության հանգամանքները եւ ցույց տվել վերջինիս գրաված տեղը հունաբան դպրոցի համակարգում²³: Հունաբան դպրոցին նվիրված հաջորդ աշխատանքն իրեն երկար սպասեցնել չտվեց: 1904 թ. «Արարատ»-ում լույս տեսավ հայագետի «Ուսումնասիրություն Դավիթ Հարքացի փիլիսոփային վերագրված իմաստասիրական երկերի» հետազոտությունը²⁴: Դավիթ Անհաղթի անձի, գործի, նրա ժառանգության անդրադարձը Մանանդյանի համար սոսկ հրապուրանք չէր: Ընդհանրապես հայագիտության մեջ հստակ պատկերացումներ չկային այն բազմաթիվ Դավիթ Իմաստասերների վերաբերյալ, որոնք գործել էին Ե.-է. դարերում՝ Դավիթ Մեկնիչ, Դավիթ Հայ, Դավիթ Արմենիոս, Դավիթ Հարքացի, Դավիթ Ներգինացի, Դավիթ Անհաղթ եւ այլ անունների ներքո: Հ. Մանանդյանը իր առջեւ խնդիր է դնում հարթեցնել այս կնճիռը եւ տարրորոշել Դավիթ Անհաղթին մյուս Դավիթներից: Նա առաջարկում էր վիճելի խնդիրը լուծել ոչ թե հին մատենագիրների վկայությունների քննության, այլ Դավիթ Անհաղթին վերագրված երկերի բովանդակության մանրազնին քննության միջոցով: Առաջնորդվելով այս ճիշտ մեկնակետով՝ Մանանդյանը կարողացավ սահմանազատել Դավիթ Հարքացուն Դավիթ Մեկնիչից կամ Անհաղթից եւ ապացուցել, որ վերջինս սովորել է Ալեքսանդրիայում՝ նշանավոր փիլիսոփա Օլիմպիոգորոս Կրտսերի մոտ, եւ եղել նորալատոնական: Այնուհետեւ Հ. Մանանդյանը Ե.-է. դարերում ստեղծված փիլիսոփայական երկերից ու թարգմանություններից առանձնացրեց նորալատոնական ուղղությանը հետեւող ներքոնշված գրվածքները եւ ապացուցեց, որ հենց դրանք են պատկանում Դավիթ Անհաղթի գրչին՝

Ա. «Սահմանք իմաստասիրության»,

²² A. MANANDIAN, Nonnos. Die Scholienzufünf Reden des Gregor von Nazianz, տե՛ս ZAPh, 1902, Bd. 1, Heft 3, s. 220–272, Heft 4, s. 273–306. *Նույնը տե՛ս նաեւ առանձին գրքով՝* Marburg-Hessen, 1903, էջ 81.

²³ Հ. Մանանդյանի սույն ուսումնասիրության արժանիքների մասին մանրամասն տե՛ս «Լուծմա», 1903, թիւ 3, մայիս-հունիս, էջ 301–309. Ն. Ակինյան, «Հանդէս ամսօրեայ», 1904, թիւ 5, էջ 139–146, թիւ 6, էջ 165–175, Н. АДОНИЦ, «Византийский временник», 1904, N 11, стр. 321, H. GOUSSEN, «Th. Rev.», Strasburg, 1903, p. 230 f., E. PREUSCHEN, «DL», 1904, p. 777 f., I. KARST, «Or. Chist.», N.S.I., 1911, p. 142–144, «Berlin. Phil. Wochensher», Berlin, 1904, N 9, s. 264:

²⁴ Տե՛ս «Արարատ», 1904, Բ., էջ 157–171, Զ., էջ 564–577, է.-Լ., էջ 649–657: Նույն թվականին սույն ուսումնասիրությունը լույս է տեսնում նաեւ առանձին գրքով, սակայն այլ խորագրի ներքո՝ «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ: Մատենագրական հետազոտություն», Վաղարշապատ, 1904, 39 էջ:

Բ. «Վերլուծութիւն ներածութեանն Պորփիրի»,
Գ. «Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտելի»:

Հետաքրքիր է նշել, որ 1902 թ. էջմիածնի մատենադարանում աշխատելու ժամանակ Հ. Մանանդյանը հայտնաբերեց փիլիսոփայական մի անհայտ ու անանուն բնագիր, որ կրում էր՝ «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի» խորագիրը: ԺԳ. դարին պատկանող սույն ձեռագիրը պակասավոր էր, բացակայում էին սկիզբն ու վերջին էջերը, նշված չէր հեղինակի անունը: Հետագա ուսումնասիրությունները փաստեցին, որ թեեւ գրչագիրը տվյալ աշխատության միակ պահպանված ընդօրինակությունն է, սակայն հայտնի է դրա հունարեն մամուլչական պահպանված բնագիրը: 1900 թ. Բեռլինում Ադոլֆ Բուսսեն հրատարակել էր այն, սակայն վերագրելով էլիաս Իմաստասերին²⁵:

Հայերեն հայտնաբերված ձեռագիրը համեմատելով Արիստոտելի կատեգորիաների մասին Ա. Բուսսեի հրատարակության հետ՝ Մանանդյանը անմիջապես նկատեց դրանց նույնական լինելը եւ, չխորանալով բանասիրական մանրամասնությունների մեջ՝ այն վերագրեց էլիասին²⁶: Բուսսեի հետեւությունները էլ նա նորահայտ բնագիրը հրատարակեց որպես էլիասի հեղինակած երկ²⁷:

Հունարեն դպրոցի առանձին հեղինակների ու շրջանների վերաբերյալ Հ. Մանանդյանի այս հետաքրքրությունը հետագայում ամփոփվեց ծավալուն մի մենագրության մեջ, որի մտահղացման գաղափարն ու իրականացման ուղղությամբ ձեռնարկված առաջին քայլերը կատարվեցին նրա գործունեության էջմիածնական տարիներին²⁸: Հաջորդ աշխատանքը, որ այդ շրջանում տպագրեց Հ. Մանանդյանը, նվիրված էր

²⁵ Պ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 341:

²⁶ Միայն տարիներ անց պրոֆ. Ս. Արեւշատյանը իր ուսումնասիրությամբ ապացուցեց, որ սույն երկի վերագրումը էլիաս Իմաստասերին զուրկ է որեւէ հիմքից: Ինչպես հայկական, այնպես էլ հունական սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ այն պատկանում է Դավիթ Անհաղթին (տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկասիրությունք փիլիսոփայականք: Համահավաք քննական բնագրերը եւ առաջաբանը Ս. Արեւշատյանի, Երեւան, 1980 եւ այլն):

²⁷ Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի, Ընծայեալ էլիասի Իմաստասիրի: Ի լոյս էած Հ. Մանանդեան, Ս. Պետերբուրգ, 1911, VIII+ 177 էջ. Տե՛ս նաեւ սույն գրքի գրախոսականները՝ Ն. Աղբալյան, «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, № 3, մայիս, էջ 617-620; Ն. Ակինյան, «Հանդէս ամսօրեայ», 1913, թիւ 4, էջ 246. Գ. Նահապետյան, «Բազմավեպ», 1913, թիւ 2, էջ 92-95. Ա. Վարդանյան, «Հանդէս ամսօրեայ», 1912, թիւ 11, էջ 684-686; A. Meillet, «Journal Asiatique», Paris, 1912, tome XX. P. 174-175;

²⁸ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ, Հունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1925, 1926, 1927, 1928. Տե՛ս նաեւ առանձին գրքով՝ Վիեննա, 1928, էջ 299:

Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն»-ին²⁹: Հայտնի է, որ Եւսեբիոսի սույն երկասիրության հունարեն բնագիրը կորել է, նրանից պահպանվել են միայն առանձին քաղվածքներ: Փոխարենը հայտնի են լատիներեն եւ հայերեն թարգմանությունները: Հ. Մանանդյանի պնդմամբ, հայերեն թարգմանությունը (Ե. դար) լիովին փոխարինում է հունարեն բնագրին: Եւսեբիոսի «Քրոնիկոն»-ի գրաբար տեքստը հրատարակել է Մ. Ավգերյանը լատիներեն թարգմանության եւ հունարեն բնագրի պահպանված հատվածների հետ միասին³⁰: Ահա այս հրատարակության միջոցով է, որ Եւսեբիոսի «Քրոնիկոն»-ը դառնում է գիտական հասարակության սեփականությունը: Տպագրությունից որոշ ժամանակ անց հայտնաբերվում են Եւսեբիոսի «Քրոնիկոն»-ի հայերեն այլ ձեռագրեր եւս, մասնավորապես՝ էջմիածնի ձեռագրապահոցի թիվ 1775 ձեռագիրը³¹: Այն գրվել է 1217 թ.: Հ. Մանանդյանը մանրամասն ուսումնասիրել է հիշյալ ձեռագիրը, որը, բացի Եւսեբիոսից, պարունակում է նաեւ այլ բնագրեր, մասնավորապես՝ իրեն քաջածանոթ Նոնոսի մեկնությունը: Ահա այս ձեռագրի 117բ-127բ թերթերում են զետեղված քաղվածքներ Եւսեբիոսի «Քրոնիկոն»-ից: Այդ հատվածները խիստ եզակի էին եւ, ինչպես հավաստում է Հ. Մանանդյանը, «արժեքավոր են այն տեսակետից, որ գաղափար են տալիս էջմիածնի թիվ 1724 մայր ձեռագրի եւ Մ. Ավգերյանի լույս ընծայած բնագրի թերությունների մասին»³²: Նորահայտ քաղվածքները հավասար էին Ավգերյանի հրատարակածի 250 տողին, իսկ այդ 250 տողում Մանանդյանը մատնանշում է 188 տարբերություններ, որոնցից շատերը տպագրվածից առավել նախընտրելի էին: Սա Հ. Մանանդյանի վերջին աշխատությունն էր, որ լույս էր տեսնում Գեորգյան ճեմարանում պաշտոնավարելու ընթացքում: էջմիածնական տարիները անշնչելի եւ թանկ հիշողություններ թողեցին Հ. Մանանդյանի կյանքում: Այստեղ է, որ ճեմարանի եւ Մայր Աթոռի մատենադարանի կամարների ներքո նա վերջնականապես ձեւավորվեց որպես հայագետ: Այստեղ է, որ լույս տեսանրա առաջին երկասիրությունները, եւ որոնք անմիջապես տեղ զբաղեցրին հայագիտության ոսկե ֆոնդում: Հայոց հին եւ միջնադարյան պատմության հարցերի քննությանն են նվիրված ականավոր պատմաբան

²⁹ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ, Քաղվածքներ Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից մի հին ձեռագրում, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1905, թիւ 1, էջ 15-19:

³⁰ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացույ ժամանականք, Վենետիկ, 1818:

³¹ Ալժմ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1904 գրչագիրը:

³² Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ, Քաղվածքներ..., էջ 15:

Նիկողայոս Ադոնցի գիտական մի քանի հոդվածները, որոնք տպագրվել են Ի. դարասկզբին «Արարատ» ամսագրի էջերում: Տասնմեկ տարեկանում՝ 1882 թ. Ն. Ադոնցն ավարտելով Տաթևի վանական վարժարանը ընդունվում է Գեորգյան ճեմարանի դպրոցական հանրակրթական բաժինը եւ այն ավարտում 1889 թ. մայիսին «հուլիս գովելի» եւ «գովելի» գնահատականներով, նույն տարում ուսումնառությունը շարունակում է ճեմարանի լսարանական մասնագիտական բաժնում, 1891 թ. փետրվարից տեղափոխվում է Թիֆլիսի ռուսական դասական 2-րդ դիմնազիան³³: Այն ավարտելուց հետո՝ 1894 թ. Ն. Ադոնցը ընդունվում է Ս. Պետերբուրգի պատմա-բանասիրական ֆակուլտետը, որն առաջին կարգի դիպլոմով ավարտում է 1899 թ., ապա եռամյա (1899–1902 թթ.) կատարելագործումը իրականացնում է Մյունխենում, Փարիզում, Լոնդոնում եւ Վենետիկում՝ աշխարհի լավագույն բյուզանդագետների եւ հայագետների հսկողության ներքո: Գեորգյան ճեմարանը, ուր անցկացրեց Ադոնցն իր մանկությունն ու պատանեկության տասը տարիները, անչնչելի հետք թողեց նրա աշխարհայացքի ձևավորման, բնավորության, դաստիարակության ու հակումների վրա: Ուստի, պատահական չէ, որ երիտասարդ բյուզանդագետի գիտական հոդվածներից մի քանիսը, որոնք վերաբերում էին հայ-բյուզանդական Ե.-է. դարերի պատմությանը, Հ. Մանանդյանի նախաձեռնությամբ տպագրվեցին «Արարատ» ամսագրի 1902–1904 թթ. համարներում³⁴: Հատկանշական է, որ իր կյանքի այս չափազանց ճակատագրական օրերին նա ժամանակ, եռանդ եւ տրամադրություն է ունենում Ս. Պետերբուրգում հրատարակելու «Բանբեր գրականության եւ արվեստի» պարբերականի զույգ, Ա. Չոպանյանի արտահայտությունամբ՝ «Սիրուն» հատորները: «Արարատ» ամսագրի 1903 թ. հունվարի Ա. համարում գրված է. «Հայ լրագրության պատմության մեջ առաջիններից մեկը՝ Ն. Ադոնցը, մտքեց հեղինակներին հոնորար վճարելու կարգը՝ մեկ մամուլ ինքնուրույն գրվածքների համար 25–40 ռ., թարգմանությանը՝ 15–20 ռուբլի»³⁵: Այս իրողությունը ոչ միայն բարձրացնում էր «Բանբերի» գրական արժեքն ու հեղինակությունը, այլեւ նյութական ինչ-ինչ ապահովություն էր տալիս հայ մտավորականներին: Դեռ նոր էին ավարտվել մագիստրոսական թեզի պաշտպանության հետ կապված հոգսերը, երբ

³³ Պ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, նշվ. աշխ., էջ 430, 431:

³⁴ Ն. ԱԴՈՆՑ, Հայկական հարց, Երեւան, 1996, էջ 10:

³⁵ Նույն տեղում, էջ 11:

երիտասարդ հայագետը ձեռնամուխ է լինում գիտական նոր հետազոտություն: Աշխատանքներն ամբողջ թափով ընթանում են 1911 թ.: Նույն այդ ժամանակ նա այցելում է Վիեննա եւ Վենետիկ, 1912 թ. ամռանը մասնակցում է Անիի հնագիտական 11-րդ դաշտային աշխատանքներին, որոնց մասին տպագրվել է «Արարատ» ամսագրի 1912 թ. համարներից մեկում, այնուհետեւ այցելում է Ս. էջմիածին, 1913 թ. դարձյալ Վենետիկ, ծանոթանում նշված մատենադարանների հին հայկական քերականագիտական բնագրերին³⁶: 1915 թ. «Արարատ» ամսագրի էջերում, ապա առանձին գրքով լույս է տեսնում նրա «Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները» աշխատությունը, որը նույն 1915 թ. մայիսի 14-ին պաշտպանում է որպես դոկտորական թեզ՝ պաշտոնական ընդդիմախոսներ ունենալով Ն. Մառին եւ Ս. Ժեբելեւին: Ն. Ադոնցին շնորհվում է հայկական բանասիրության դոկտորի գիտական աստիճան: Հետաքրքիր է, որ ընդդիմախոսներից Ժեբելեւը առաջարկում է նրան միաժամանակ շնորհել նաեւ դասական բանասիրության դոկտորի գիտական աստիճան: Աշխատության մասին իբրեւ արժեքավոր գործ գրախոսվում է «Արարատ» ամսագրի 1919թ. համարում՝ «Պատմա-բանասիրական արժեքավոր գործ» վերնագրով³⁷: Գիտական նոր կոչումը հնարավորություն է տալիս նրան զբաղեցնելու պրոֆեսորի հաստիք, եւ, իրոք, 1916 թ. վերջերին նա ընտրվում է հայկական եւ վրացական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր: Նույն 1916 թ. ամռանը նա Ն. Մառի, Ա. Լոռիս-Մելիք Քալանթարի, Հ. Օրբելու հետ մասնակցում է գիտական այն արշավախմբին, որը գործուղվել էր ռուսական բանակների կողմից ազատագրված Մուշ եւ էրզրում: Այնուհետեւ, նույն թվականին ղեկավարում է Վանի հնագիտական արշավախումբը: Այդ մասին առանձին տեղեկատվություն է տպագրվում «Արարատ» ամսագրի 1917 թ. համարներից մեկում³⁸: Այդ օրերի նրա գրառումներն ու օրագրությունները ցույց են տալիս, թե որքան խորն է ապրել հայագետն իր ժողովրդին հասած դաժան հարվածները, որքան մտահոգ է եղել հայկական հինավուրց մշակույթի հետագա ճակատագրի համար: Այնքան ցնցող են տպավորությունները, որ նա օրեր շարունակ հայտնվել է անզգայության վիճակում. «Զգիտեմ, ինչպես եմ շնչում եւ ինչպես եմ ապրում այս բոլորից հետո», - գրում է նա իր նոթատետրում³⁹:

³⁶ Նույն տեղում, էջ 10:

³⁷ «Արարատ», 1919, Ա., էջ 65-71:

³⁸ «Արարատ», 1917, Բ., էջ 621:

³⁹ Ն. ԱՌՆՑ, նշվ. աշխ., էջ 12:

Հետագայում թե՛ Ռուսաստանում՝ Պետերբուրգում, եւ թե՛ Լոնդոնում, Փարիզում ու Բրյուսելում ապրելու տարիներին նշանավոր հայագետ-պատմաբանը, Հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցը, հուշագիրների վկայությամբ, միշտ հիշել ու ակնածանքով է խոսել Գեորգյան ճեմարանում ստացած իր փայլուն կրթության եւ «Արարատ» ամսագրի պատմագիտական մտքի անդաստանում խորը հետք թողած գիտական մեծ արժեքի մասին:

«Արարատ» հանդեսի էջերում հայոց հին եւ միջնադարյան պատմության հիմնախնդիրներով հանդես են եկել նշանավոր հայագետ պատմաբան Քերովբե Պատկանյանը իր՝ «Հայաստանի հին պատմության աղբյուրները», «Հայոց պատմության հին ավանդույթների քննությունը» գիտական հոդվածով, որը տպագրվել է ամսագրի 1878-1879 թթ. համարներում՝ 1878, հ. Ա., էջ 423-435, 490, հ. Բ. էջ 533-546, 1879, հ. Ա., էջ 420-436, 1880 թ. հ. Ա., էջ 80-92, 136-145, հ. Բ., էջ 245-255, 303-312 եւ 342-354: Նշանավոր հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանը (միաբան) «Արարատ» ամսագրի 1889 թ. հ. Ա. (էջ 87-106), 1890 թ., հ. Ա., 2, 3-ում էջ 567-576, 674-682, 1894 թ. հ. Ա., Բ., (էջ 22-26, 128-130 եւ 154-190), հանդես է եկել Մովսես Խորենացու Հայոց պատմության ուսումնասիրության վերաբերյալ ընդարձակ հոդվածաշարով: Նույն հայագետ պատմաբանը թարգմանել է գերմաներենից եւ «Արարատ» ամսագրի 1903 թ. հ. Ա.-ում (էջ 654-686) ներկայացրել է Հ. Գելցերի «Համառոտություն բյուզանդական կայսրերի պատմության» աշխատությունը, որը տպագրել է ամսագրի մյուս համարներում եւս: Նշանավոր հայագետը «Արարատ» ամսագրի 1911 թ. համարներում հանդես է գալիս «Հարավային Ռուսաստանի հայերի գաղթավայրերի պատմության համառոտ նյութեր» վերնագրով հոդվածաշարով:

«Արարատ» ամսագրի 1903 թ. հ. Ա.-ում 30 էջով, իսկ Բ.-ում 25 էջով ներկայացվել է անվանի հայագետ-պատմաբան, վարդապետ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի «Պատմություն հայոց ի սկզբանե մինչեւ Արշակունի հարստության հաստատումը» աշխատությունը: «Արարատ» ամսագիրը 1901, 1902, 1903, 1904 թթ., ապա 1907, 1908 եւ 1912 թթ. իր համարներում տպագրում է նշանավոր պատմաբան Լեոյի Վանի թագավորությանը, հայոց հին շրջանի եւ միջնադարի պատմության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ: Լեոյի «Հայոց պատմությունը սկսած ԺԶ. դարից» աշխատության Ա. հատորի վերաբերյալ գրախոսությունը տպագրվել

է «Արարատ»-ի 1908 թ. հ. Ա.-ում (էջ 232-236): «Արարատ» ամսագիրը 1907 թ. հ. Բ.-ում (էջ 89-95) անդրադարձել է Լեոյի գրական գործունեության 25-ամյակին՝ արժեւորելով այն: Ամսագրի 1917թ. հ. Բ.-ում (էջ 221-226) ներկայացված է Գյուտ Տեր-Ղազարյան վարդապետի գրախոսականը Լեոյի «Հայոց պատմություն» 1917 թ., Թիֆլիս, խիստ արժեքավոր աշխատության մասին: Կարապետ Տեր-Մկրտչյան վարդապետը «Արարատ»-ի 1901 թ. հ. Ա.-ի (349-354 էջում) հանդես է եկել պատմաբան Լեոյի «Մուրճ» եւ «Մշակ» ամսագրերում տպագրված էջմիածնի վերաբերյալ հոդվածների դեմ, քննադատելով դրանք: Հին եւ միջնադարյան հայոց պատմության վերաբերյալ «Արարատ»-ի էջերում տպագրվել են նաեւ բազմաթիվ սեպագիր արձանագրություններ եւ վանական համալիրների շինարարական արձանագրություններ եւս: Դրանցից կարեւորվում են հատկապես նշանավոր հայագետ Հովսեփ Օրբելու «Անիի ավերակները. Անիի պեղումները» հոդվածաշարերը, որոնք տպագրվել են 1911 թ. հ. Ա., Բ.-ում (էջ 325-327, 396-400, 568-69), որտեղ վերլուծությունների հիման վրա պարզաբանվում է Անիի Մայր տաճարի՝ կովկասյան հրաշքի հայկական ճարտարապետության առանձնահատկությունները: Մեսրոպ-Տեր Մովսիսյանը «Արարատ»-ի 1918 թ. համարներում՝ հ. Ա, Բ.-ում (էջ 204-226) եւ (306-368) հանդես է եկել «Արձանագրություններ Տաթևի վանքի եւ շրջակայքի» վերնագրով հոդվածաշարերով: Կարեւորվում են հատկապես «Արարատ»-ի հայերեն վիմագրերը: Հայ վիմագրությամբ զբաղվողները հիմնականում Մայր Աթոռի միաբաններն էին, որոնք իրենց ճանապարհորդական շրջագայությունների եւ տարբեր վանքերում առաջնորդության տարիների ընթացքում ընդօրինակել ու վերծանել են մեր միջնադարյան պատմության համար հավաստի սկզբնաղբյուրներ համարվող քարեղեն վավերագրերը: Նշանակալի են Աբել արք. Մխիթարյանցի, Ստեփանոս վրդ. Մխիթարյանցի, Ռոստոմ բեգ Երզնկյանցի, Խաչիկ վրդ. Դադյանի, Գարեգին վրդ. Հովսեփյանի (հետագայում՝ Կիրիլիո կաթողիկոս), Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի (Մագիստրոս) եւ ուրիշների վիմագրագիտական ուշագրավ հաղորդումները՝ նվիրված Հոռոմոսի, Մարմաշենի, Գեղարդի, Հաղբատի, Արտազի, Ս. Թադեոս առաքյալի, Ս. Հռիփսիմի, Տաթևի եւ մի շարք այլ վանքերի ու եկեղեցիների տեղագրությանն ու վիմական արձանագրություններին: Նկատենք, որ վկայակոչված հրապարակումներից շատերը «Արարատ»-ի ժառանգությունը» շարքով վերահրատարակվել են իրենց հեղինակների աշխատություններն

ամբողջացնող ժողովածուներում, իսկ մի քանիսն ավելի վաղ՝ առանձին գրքերով: «Արարատ» ամսագիրը առանձին հոդվածաշարեր է նվիրել հայկական տեղանունների պատմաաշխարհագրական ուսումնասիրությանը: Հատկապես ուշագրավ ուսումնասիրություններ են հանդեսի էջերում տպագրված Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանցի Արմավիրի եւ Արագածոտնի գավառների պատմաաշխարհագրական տեղեկությունները: Շիրակ եւ Բագրեւանդ գավառների պատմաաշխարհագրական նկարագրությունն են նվիրված «Արարատ» ամսագրի 1889 թ., հ. Ա., Բ.-ում, (էջ 34-41, 139-663, 194-221) տպագրված հոդվածաշարերը: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Արարատ» ամսագրի 1889 թ. հ. Բ., Գ.-ում (էջ 194-331) տպագրված Պողոս Մուրադյանի (Ալաշկերտցի) «Բագրեւանդ գավառի Հովհաննա վանքի մասին տեղեկություններն ու Բագրեւանդ գավառի հայ բնակչության վիճակը 18-րդ դարում քրդական ցեղերի ավարառությունների եւ կոտորածների արդյունքում» հոդվածաշարը: «Արարատ»-ի 1888 թ. հ. Ա., Բ.-ում (էջ 422-433) ներկայացված է «Ակնարկ արաբական շրջանի հայոց պատմության վերաբերյալ» ուշագրավ հոդվածը: «Արարատ» ամսագրի Ի. դարասկզբի մի շարք համարներում հայոց եւ վրաց հին եւ միջնադարյան պատմության վիճահարույց հիմնախնդիրների քննական վերլուծությանն են նվիրված նշանավոր հայագետ Լեւոն Մելիքսեթ-Բեկի պատմա-բանասիրական բնույթի հոդվածաշարերը: Այսպես, օրինակ «Արարատ»-ի 1909 թ. մի քանի համարներում Մխիթար Գոշի «Գծագրութիւն... յաղագս վրաց» թուղթը առաջին անգամ է պատմա-բանասիրական քննության ենթարկվում Լ. Մելիքսեթ-Բեկի կողմից: Վերջինս հաստատում է, որ «գծագրութիւն...»-ը գրված է Զաքարիա եւ Իվանե Երկայնաբազուկների պատվերով՝ ի պատասխան վրաց հոգեւորականությանը, եւ որ Գոշի նպատակը հայոց գավառանքի պաշտպանությունն է⁴⁰: Ընդ որում, որպես երկու սկզբնաղբյուր նշվում է Հովհան Օձնեցին եւ Անանիա Սանահնեցին⁴¹: Այս ուսումնասիրությունը երկուստեք կարեւորություն ներկայացնող հետազոտություն է հայագիտության եւ վրացագիտության համար՝ հատկապես իր պատմական մասով եւ կից քարտեզներով մատենագիտական սպառիչ ցուցումներով: Պրոֆ. Մելիքսեթ-Բեկին ենք պարտական Թովմա Մեծոփեցու պատմության՝ Վրաստանին վերաբերող գրվագի թարգմանության ու «Արարատ»

⁴⁰ Տե՛ս Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ, Պատմա-բանասիրական պրպտումներ, Ս. էջմիածին, 2010, էջ 12:

⁴¹ Նույն տեղում, էջ 13:

ամսագրի էջերում հրատարակության համար⁴²։ Լ. Մելիքսեթ-Բեկի գիտական ժառանգության բաղկացուցիչ մասն են կազմում հնագիտական, ազգագրական եւ վիմագրագիտական ուսումնասիրությունները, որոնց մի մասը տպագրվել է «Արարատ»-ի էջերում։ Հայոց հին եւ միջնադարյան պատմության որոշ հիմնախնդիրներին է անդրադարձել նշանավոր հայագետ Արշակ Տեր-Միքելյանը, որ Գեւորգյան ճամբարանում դասավանդելով 1892-1894 թթ. միաժամանակ հանձն է առնում «Արարատ» ամսագրին թղթակցելու պատասխանատու գործը՝ իր հայագիտական հոդվածներով եւ ուսումնասիրություններով հարստացնելով «Արարատ»-ի էջերը՝ նպաստելով վերջինիս հեղինակության բարձրացմանը։ 1892 եւ 1893 թթ. Ա. Տեր-Միքելյանն «Արարատ» ամսագրում հրատարակում է մինչ այդ հայագիտության մեջ անհայտ բնագրերը⁴³։ Հիշատակելի է մասնավորապես՝ «Ասողկալ պատմութեան», «կորած» գլուխները⁴⁴, «Կոնստանդին Ա կաթողիկոսի մի թուղթն առ Հեթում թագաւորն» , «Բան պիտանի Գրիգորիսի կաթողիկոսի, այլ ինչ Գրիգորի»⁴⁵ հոդվածաշարերը։ Այսպիսով՝ «Արարատ» ամսագիրը իր էջերում արտացոլել է հայոց հին եւ միջնադարյան պատմության բազմաթիվ հիմնախնդիրներ։

Հանդեսի էջերում բազմաթիվ են նաեւ հայոց նոր եւ նորագույն պատմության վերաբերյալ հոդվածներն ու հոդվածաշարերը։ Հայոց նոր պատմության հատկապես ԺԸ.-ԺԹ. դարերի վիճահարույց բազմաթիվ հիմնախնդիրներ իրենց արտացոլումն են գտել ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի կողմից «Արարատ» ամսագրում տպագրած հոդվածներում։ Գերմանիայում համալսարանական կրթություն ստացած (Ենայի, Հալլեի, Մյունխենի) համալսարանների պատմության, տնտեսագիտության եւ փիլիսոփայության ֆակուլտետներն ավարտած նշանավոր պատմաբանը վերադարձել է հայրենիք՝ Շուշիում աշխատելով (1913-1914թթ.) որպես գերմաներեն եւ ընդհանուր ազգաց պատմության ուսուցիչ⁴⁶։ Նա նաեւ հիանալի գրականագետ էր, պատմաբան եւ տեսաբան, քաղաքական հրապարակախոսության աչքի ընկնող ներկայացուցիչ։ Թեեւ բազմաժանր ու բազմաբնույթ է Ա. Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը, սակայն պայմանականորեն այն կարելի է

⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 16։

⁴³ Տե՛ս Ա. Տեր-Միքելյան, «Արարատ», 1892, էջ 748-754։

⁴⁴ Նույն տեղում, էջ 1097-1099։

⁴⁵ Տե՛ս Ա. Տեր-Միքելյան, «Արարատ», 1893, էջ 944-973, 1044-1058։

⁴⁶ Ա. Հովհաննիսյան, Պատմագիտական ուսումնասիրություններ, Ս. Էջմիածին, 2007, էջ 9։

անվանել հայ ազատագրական շարժում եւ պայքար: 1914 թ. սեպտեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենյանցի առաջարկութեամբ, Աշոտ Հովհաննիսյանը տեղափոխվել է Վաղարշապատ եւ նշանակվել Գեորգյան ճեմարանի քաղաքատնտեսութեան, լատիներենի, գերմաներենի եւ ընդհանուր ազգաց պատմություն առարկաների դասախոս: Ըճեմարանում աշխատելու տարիներին (1914–1917) ուսումնասիրմթնոլորտը նպաստավոր եղավ պատմաբանի գիտական բուռն հետաքրքրութուններին ինչ-որ չափով հագուրդ տալու համար: Նրա հետաքրքրութունների ծիրից ներս էին գտնվում հայ ազգային-ազատագրական պայքարի հարցերն ու մեկիքական տոհմերի պատմությունը: էջմիածնական տարիներին է, որ նա «Արարատ» ամսագրի էջերում տպագրում է իր առաջին հայագիտական ուսումնասիրութունները, որոնք աչքի էին ընկնում ոչ միայն ասեկիքի թարմութեամբ, այլեւ ուղենշում էին ապագա հետազոտողներին, թե որ բնագավառում կարող են նպաստ բերել հայ պատմագիտութեանը⁴⁷: 1914–1916 թթ. ընթացքում «Արարատ» ամսագրում տպագրվեց երիտասարդ Ա. Հովհաննիսյանի պատմագիտական աշխատութունները, ինչպես նաեւ էջմիածնական տարիներին գրված, սակայն 1921–1922 թթ. նույն էջմիածնում լույս տեսած երկու ուսումնասիրութունները, ընդամենը՝ ութ աշխատութուն: Գեորգյան ճեմարանում աշխատելու շրջանում ամառային բոլոր արձակուրդներին Ա. Հովհաննիսյանը մեկնում էր Մոսկվա, որտեղ շարունակում էր պրպտումները տեղի արխիվային հաստատութուններում՝ էջմիածնական իր ուսումնասիրութունները համապատասխան ուսական վավերագրերով հարստացնելու համար: «Հայ-ռուս օրիենտալիստի ծագման խնդիրը» ուսումնասիրութունը գրելիս՝ 1915 թ. ամռանը, ինչպես հենց ինքը՝ Ա. Հովհաննիսյանն է հավաստում, շարունակել է աշխատանքը Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան արխիվում⁴⁸: Տվյալ խնդիրների հետ սերտ կապեր ունեն նաեւ պատմաբանի «Հակոբ Զուղայեցու մի գրութունը ուսարքունիքին»⁴⁹, «Պետրոս դի Սարգիս Գիլանենց»⁵⁰ եւ այլ ուսումնասիրութունները⁵¹ էջմիածնական տարիներին գրած «Հայ-ռուս օրիենտալիստի ծագման խնդիրը» աշխատութունը շարագրելիս Մոսկվայի Հին

⁴⁷ Նույն տեղում, էջ 10:

⁴⁸ Նույն տեղում, էջ 22:

⁴⁹ «Արարատ», 1915, Թ.-Ժ., էջ 775–781:

⁵⁰ էջմիածին, 1916:

⁵¹ A. JOHANNISSIAN, Israel Ori und die Armenische befreiungsidee, Munchen, 1913:

վավերագրերի պետական կենտրոնական արխիվում հայտնաբերել է բազմաթիվ արժեքավոր վավերագրեր, որոնցից յոթը վերաբերվել են Օրիի գործունեությանը: Փաստորեն Ա. Հովհաննիսյանի ազատագրական շարժման նախասիրած պատմական գործիչը Իսրայել Օրին է: Հայ ազատագրական պայքարի այս աննկուն նվիրյալին է նվիրված նրա գիտական ուսումնասիրությունների մի մասը⁵²: Այդ ուսումնասիրություններից առավել մեծ կարեւորություն ունեն «Արարատ» ամսագրի 1915 թ. մի քանի համարներում տպագրված «Պետրոս դի Սարգիս Գիլանենց», «Հակոբ Զուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին» ուսումնասիրությունները, ինչպես նաեւ «ԺԳ. դարի մի ուղեւորի վկայությունը հայոց մասին», «Նոր նյութեր հայ-ունիտորական պատմագրությունից», «Հակոբ Դ. կաթողիկոսը եւ Տաճկահայ նվիրականության խնդիրը» հետազոտությունները: Այդ ուսումնասիրություններն ըստ էության ունեն աղբյուրագիտական նշանակություն: Ա. Հովհաննիսյանին հաջողվել է արխիվային բազմաթիվ նյութերի եւ էջմիածնի ձեռագրերի խորը եւ բազմակողմանի ուսումնասիրությունների շնորհիվ ստեղծել պատմագիտական արժեքավոր վավերագրեր, որոնց օգնությամբ բացահայտել է ոչ միայն Իսրայել Օրու եւ Մինաս վարդապետի կողմից դեպի ռուսական կողմնորոշումը ուղղելու հայ ժողովրդի օտար լծից ազատագրվելու նպատակամղումը, այլեւ տվել է ժե. դարավերջի եւ ժՀ. դարասկզբի շատ պատմական իրադարձությունների իսկական, օբյեկտիվ գնահատականը:

«Արարատ» ամսագրի էջերում առանձին էջեր են հատկացվում եւ հրատարակվում են հայոց ԺԺ. դարի պատմության մի շարք հիմնախնդիրներ: Այսպես, «Արարատ»-ի 1916 թ., հ. Ա.-ում (էջ 753-762) ներկայացվել է Գյուտ Տեր-Ղազարյանց Աբեղայի «Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում (1800-1870)» հոդվածը: Ամսագրի 1817 թ. հ. Ա., Բ.-ում (էջ 17-67) եւ 1878 թ. հ. Բ.-ում (էջ 46-57) տպագրված է Գալուստ Շերմազանյանցի «Ճանապարհորդություն Հայաստանում (1842 թ. օգոստոսի 12-ի օրագիրը)», «Արարատ»-ի 1878 թ. հ. Բ.-ում (էջ 197-279) նույն Գալուստ Շերմազանյանցի կողմից հրատարակվում է «Հայ գինավորական պաշտոնյաները Պարսկաստանում» ուսումնասիրությունը: Ամսագրի 1888 թ. Ա. եւ Բ. համարներում հրատարակվել է ռուս պատմաբան Վ. Պոտոյի հայերեն թարգմանված «Հայաստանի վերածնությունը» գիրքը, որից առանձին հատվածներ են ներկայացվել 1826-1828 թթ.

⁵² A. JOHANNISSIAN, նշվ. աշխ.:

Ռուս-պարսկական պատերազմից: Ամսագրի 1896 թ. հ. Ա.-ում եւ Բ.-ում (էջ 221–236, 375–396) տպագրվել է Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի «Հայերը եւ հայկական հարցը» երկու տետրակներով ուսումնասիրությունը: Ամսագրի 1912 թ. Ա. համարում (էջ 69–80) ներկայացվել է Ա.-ԴԾ-ի Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթների ժողովրդագրական պատկերը: «Արարատ» ամսագրի տարբեր համարներում՝ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին բավականին թվով հոգվածներ նվիրված են Աբդուլ Համիդի եւ երիտթուրքերի կողմից կազմակերպված հայոց ցեղասպանության հարցերին: Միայն նշենք, որ «Արարատ»-ի 1909 թ. համարներից մեկն ամբողջովին նվիրվել է Գեւորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի «Կիլիկիայի կոտորածների մասին» հոգվածին:

Հայոց պատմությունն ուր եւ նորագույն ժամանակաշրջանի հիմնախնդիրները «Արարատ»-ի էջերում ներկայացված է նաեւ նշանավոր գիտնական, վաստակաշատ պատմաբան Ալեքսեյ Զիվելեգովի հոգվածներում: Դրանցից կարելի է առանձնացնել հայկական հարցին եւ հայթուրքական հարաբերություններին նվիրված նրա հոգվածները, որոնք պարբերաբար տպագրվել են 1914, 1915 եւ 1916 թվականների «Արարատ» ամսագրի էջերում:

1914 թ. փետրվարին «Արարատ» ամսագրում լույս տեսած «Ռուսաստանը եւ Գերմանիան հայկական հարցում»⁵³ Ա. Զիվելեգովի հոգվածում համապատասխան փաստերի ներկայացմամբ բացահայտվում է Ռուսաստանի եւ Գերմանիայի տարբեր մոտեցումները հայկական բարենորոգումների ծրագրերին: Հեղինակը ցույց է տալիս, որ բարենորոգումների ուսական նախագիծը տարբերվում էր քննարկվող բարենորոգումների նախագծից: Ըստ հեղինակի՝ Գերմանիայի առաջարկով, 6 վիլայեթներին ավելանում էր եւս մեկը՝ Տրապիզոնը: Դրանով դժվարանում էր բարենորոգումների շրջանները ինքնավար Հայաստանի վերածելու հարցը: Եթե սկզբնական (ուսական) նախագծի մեջ Հայաստանը կազմում էր մի ամբողջ շրջան, հետագայում Գերմանիայի առաջարկած նախագիծով նա բաժանվեց երկու շրջանների (Էրզրում, Սվազ, Տրապիզոն) եւ հարավային (Վան, Բիթլիս, Խարբերդ ու Դիարբեքիր)⁵⁴: Ըստ Ա. Զիվելեգովի՝ առաջին տարբերակը, որը պաշտպանում էր Ռուսաստանը, իրագործելու համար ավելի ուշալ էր, քան

⁵³ Տե՛ս Ա. Զիվելեգով, Թուրքիան եւ Հայկական հարցը, Կազմեց եւ հրատարակության հանձնեց է. Միմասյանը, Երեւան, 2014, էջ 8:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 9, 10:

երկրորդը: Զիվելեգովը բացահայտում էր բարենորոգումների ձգձգման պատճառները, որոնք պայմանավորված էին եւրոպական երկրների տնտեսական ու քաղաքական շահերով: 1914 թ. «Արարատ» ամսագրում տպագրած իր հաջորդ հոդվածում՝ «Հայերը եւ նոր պատերազմը», Ա. Զիվելեգովը զուգահեռներ է անցկացնում Առաջին համաշխարհային պատերազմի եւ 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի միջեւ եւ նշում դրանց տարբերությունները⁵⁵: Այն ժամանակ հայերը հնարավորություն չունեին ներգործուն աջակցություն ցույց տալու ռուսներին: Տաճկաստանը դեռեւս զորեղ էր, իսկ հայերը ճնշված: Հեղինակը հանգում է այն տեսակետին, որ «հայերը պատրաստ են բոլոր զոհաբերություններին, միայն թե ապահովվի նրանց քաղաքական ազատ գոյությունը Ռուսաստանի հզոր հովանավորության ներքո»⁵⁶: Նույն ամսագրում տպագրած իր մեկ այլ հոդվածում՝ «Ինքնավար Հայաստանի տերիտորիան», Ա. Զիվելեգովը պատմական փաստերի համադրությամբ, վիճակագրական հարուստ տվյալների վերլուծությամբ հիմնավորում է ապագա ինքնավար Հայաստանի տարածքը, սահմաններն իբրեւ արդարացի փոխհատուցում հայերի կրած տառապանքների⁵⁷: Նա կանխատեսելով պատերազմում թուրքիայի պարտությունը՝ կարծում է, որ թուրքիայի տարածքի վրա պետք է ստեղծվեն ամենաքիչը երեք նոր ինքնավար շրջաններ. Առաջինը՝ Արաբական Միջագետքը՝ Անգլիայի հովանավորությամբ, երկրորդը՝ Սիրիան՝ Ֆրանսիայի հովանավորությամբ եւ երրորդը՝ Հայաստանը՝ Ռուսաստանի հովանավորությամբ: Տարածքի մասին խոսելիս նշանավոր պատմաբանը հաշվի առնելով պատմական եւ ազգագրական սկզբունքները՝ միանգամայն ճիշտ եւ տեղին է նշում, որ մեծ Հայաստանի ավելի խիտ բնակեցված վայրերում հայերը ամբողջ ազգաբնակչության 90 տոկոսն էին կազմում: Գրեթե նմանատիպ պատկեր էր նաեւ Փոքր Հայքի, Կիլիկիայի, Ադանայի եւ նրան կցված Հալեպի վիլայեթի հյուսիսային մասում,՝ եզրակացնում է հեղինակը⁵⁸:

1915 թ. հունվարին «Արարատ» ամսագրում հրատարակած «Կիլիկիայի հարցը» հոդվածում Ա. Զիվելեգովը քննադատում է Ն. Միլյուկովի «Речь»-ում տպագրված «Թուրքաց Հայաստանի բախտը» հոդվածը, որտեղ վերջինս ավելի դրական է համարում Արեւմտյան Հայաստանի ինքնավարության ծրագիրը 7 վիլայեթների սահմաններում, քան նրա ինքնավարությունը

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 22:

⁵⁶ Նույն տեղում, էջ 23:

⁵⁷ Նույն տեղում, էջ 24:

⁵⁸ Նույն տեղում, էջ 25:

«Հայաստանի սահմանի մեջ Կիլիկիայի հետ միասին»⁵⁹; Ա. Զիվելեգովը Կիլիկիայի միավորումը ինքնավար Հայաստանի մեջ շահավետ է համարում ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի համար⁶⁰:

Այսպիսով՝ ամփոփելով տրվում է հանդեսի էջերում ներկայացված հայոց քաղաքական պատմությանը նվիրված պատմագիտական ուսումնասիրությունների համառոտ բնութագիրը: Պատմական այս ակնարկից ակներև է դառնում, որ կեսդարյա ընթացքում կատարվել է հսկայածավալ աշխատանք, որը, ըստ ամենայնի, հարստացրել է հայ պատմագիտությունը նորանոր ձեռքբերումներով:

РЕЗЮМЕ

В статье рассмотрена роль первого на Кавказе арменоведческого журнала «Арагат» основанного в 1868 году в Вагаршапате, который в течении 50 лет издавал статьи в области арменоведения и историографии. Успех журнала в развитии историографии был обусловлен сотрудничеством плеяды талантливых и видных авторов, как армянских, так и иностранных. Из авторов, исследовавших проблемы античного, древнего и средневекового периода, в статье отмечены такие известные арменоведы-историки, как Акоп Манандян, Никогайос Адонц, а из тех, кто изучал новый и новейший периоды, — Ашот Оганнисян, Лео, Галуст Тер-Мкртчян, Левон Меликсет-Бек, Аршак Микэлян, Керовбе Патканян, Овсеп Орбели, Алексей Дживелегов и другие. В итоге констатируется следующее: а) Подавляющее большинство публикаций вышеупомянутых авторов в журнале «Арагат» выдержало суровое испытание времени, сохранив научную ценность и в наши дни. б) Полувековой журнал сумел сохранить собственное «лицо», свой специфический подход, основываясь на научность, объективность и правду. в) Журнал смог развивать лучшие традиции армянской историографии. В нем впервые поднималось множество спорных вопросов и решалось множество проблем. Журнал в некотором смысле стал путеводителем для разработки отдельных историографических тем. г) В статьях журнала «Арагат» отображены современные проявления исторической и общественной мысли. Он способствовал

⁵⁹ Նույն տեղում, էջ 26:

⁶⁰ Նույն տեղում, էջ 27:

распространению общественных наук в армянском обществе, развитию ценностей цивилизации и созданию связей для политически разделенной нации для ее дальнейшего существования.

S U M M A R Y

The article shows the role of "Ararat", the first Armenological journal in the Caucasus founded in 1868 in Vagharshapat, which within 50 years published articles on Armenological and historiographical issues, dealing with all the historical periods of Armenia. The success of the journal in developing historiography was greatly conditioned by its "legion" of talented and honored Armenian and foreign authors. Among the authors studying the problems of the ancient, old and medieval periods, the article highlights the names of such famous Armenologists-historians as Hakob Manandyan, Nikoghayos Adonts, and among those, who studied the new and the newest periods of history—Ashot Hovhannisyan, Leo, Galoust Ter-Mkrtchyan, Levon Melikset-Bek, Arshak Mikelyan, Kerovbe Patkanyan, Hovsep Orbeli, Aleksey Jivelegov and others.

As a result, the following is stated: a) The overwhelming majority of the publications of the above-mentioned authors in "Ararat" journal have stood the test of time and retained their scientific and professional value even today. b) The half century old journal has managed to preserve its own characteristics, its specific approach in Armenology and historiography, based on scientific knowledge, objectivity and truth. c) The journal was able to develop the best traditions of the Armenian historiography. It was the first to raise many controversial historical issues and solve many problems. The journal became a kind of guideline for working out several themes of historiography. d) The articles published in "Ararat" reflected contemporary manifestations of the historical and social thought. It contributed to the spread of social sciences in the Armenian society by enhancing civil values, and created relations for the politically dissevered nation for further survival.

